II

Doi:10.54503/0135-0536-2022.1-128

«ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻՆ» ԱՄԵՐԻԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ*

ՖԵԼԻՔՍ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ «Մասյաց աղավնի», հյուսիս, հարավ, իշխանություն, ստրկություն, պատերազմ, երկպառակություն, խռովություն, միասնություն, համերաշխություն, Աբրահամ Լինքոլն:

Նախաբան

Ամերիկյան քաղաքացիական պատերազմը, որը «տևեց չորս տարի և վերջ դրեց առնվազն մեկ միլիոն զինվորների ու խաղաղ քաղաքացիների կյանքին, ամենամեծ պատերազմն էր, որ երբևէ մղվել էր Նոր աշխարհում»[1]: Այդ պատերազմին հյուսիսի բանակի շարքերում մասնակցել են նաև Ամերիկայի Միացյալ Նահանգներում բնակվող սակավաթիվ հայ համայնքի անդամներից 30-ը և զորակոչված մեկ շարքային զինվոր: Քաղաքացիական պատերազմի տարիներին՝ 1863 թ., Նյու Յորքում բժշկի մասնագիտություն ստացած կոստանդնուպոլսեցի Կարապետ Գալուստյանը, ակնեցի Պարոնիկ Մաթևոսյանը[2] և վիրաբույժ Սիմոն Մինասյանը ծառայել են Ֆիլադելֆիայի զինվորական հոսպիտալներում[3]:

Ամերիկյան քաղաքացիական պատերազմի նկատմամբ անտարբեր չի մնացել ժամանակի հայ պարբերական մամուլը, որի դիրքորոշումը հայ պատմագրության մեջ հանգամանորեն ուսումնասիրված չէ: Պատերազմի 100-ամյակին նվիրված ակադեմիկոս Մկրտիչ Գ. Ներսիսյանի՝ «Քաղաքացիական պատերազմը Ամերիկայում հայ պարբերական մամուլի լուսաբանմամբ» հոդվածում[4] տրված գնահատականները վերանայման կարիք ունեն: Անվանի պատմաբանը խորհրդային պատմագիտության գաղափարախոսական կաղապարների ոգով պատերազմն անվանում է «բուրժուադեմոկրատական հեղափոխություն»[5], ներկայացնում է պատերազմի ընթացքը լուսաբանած տասը պարբերականներից յուրաքանչյուրի հրապարակումներն ու բացահայտում դրանց դիրքորոշումը: Նա անտեսում է այդ պարբերականների գաղափարական ուղղվածությունը և հասարակական հոսանք

---

* *Ներկայացվել է 02. IX. 2021 թ., գրախոսվել է 30. IX. 2021 թ., ընդունվել է տպագրության 07. II. 2022 թ.:*

[1] Фостер. 1953, 383; Paludan. 1988, 375.

[2] *Տե՛ս «Արշալույս արարատյան» (Զմյուռնիա), 04. V. 1863:*

[3] Malcom. 1919, 58–59.

[4] *Տե՛ս Ներսիսյան. 1961, 47–66:*

[5] *Ներսիսյան. 1982, 142:*

ներկայացնելը, որը կարևոր է ինչպես պարբերական մամուլի, այնպես էլ հասարակական մտքի պատմության համար:

Ամերիկյան քաղաքացիական պատերազմը լուսաբանած պարբերականներից մեկը «Մասյաց աղավնի» ամսագիրն է: Այն 1855–1858 թթ. լույս էր տեսնում Փարիզում, իսկ 1860–1865 թթ.՝ Թեոդոսիայում, հայ ազգային պահպանողական հոսանքի երևելի դեմքերից Գաբրիել վարդապետ Այվազովսկու (1812–1880) խմբագրությամբ: Խորհրդային տարիներին ակադեմիկոս Արտաշես Կարինյանն անդրադարձել է Փարիզում հրատարակության տարիների «Մասյաց աղավնու» գաղափարական ուղղությանը և նրա խմբագրի հայացքներին[6]: Նույնը չի կարելի ասել պարբերականի հրատարակության երկրորդ փուլի մասին, որը տակավին համակողմանիորեն լուսաբանված չէ: Խորհրդահայ պատմագրության գնահատականով՝ «Մասյաց աղավնու» խմբագիրը «կղերա-աղայական հոսանքի առավել աչքի ընկած գործիչներից էր»[7], «կաթոլիկ եկեղեցու պատգամներին կառչած հրապարակախոս»[8]: Նրա խմբագրած «Հետաղեմ այդ պարբերականը»[9] Փարիզում լույս տեսած տարիներին «բոնապարտիստական ձայնատարն» էր, իսկ Ռուսաստանում՝ «ցարիզմի փողհարը»[10]: Կարելի է վստահաբար պնդել, որ այն ամենևին էլ հետաղեմ գաղափարներ կրող չէր, իսկ Գ. վրդ. Այվազովսկին կաթոլիկ եկեղեցու հրապարակախոս չէր: 1855 թ. Վենետիկի կաթոլիկ Մխիթարյանների միաբանությունից հեռացած և Հայ Առաքելական եկեղեցու գիրկը դարձած Գ. վրդ. Այվազովսկին[11] «Մասյաց աղավնում» կրոնական բնույթի նյութեր չէր հրապարակում: Ավելին, նա քննադատում էր կաթոլիկ միաբաններին՝ հակաազգասիրական գործունեության համար, հորդորում համախմբվել ազգային եկեղեցու շուրջ:

«Մասյաց աղավնին» հրատարակվում էր հինգ կայուն բաժիններով, որտեղ զետեղված բովանդակալից հրապարակումները նպատակ էին հետապնդում նպաստել հայության բարոյական ու մտավոր առաջադիմությանը, ազգային համերաշխությանը, հայրենասիրությանը և միաբանությանը: Ամսագիրը պարբերաբար հրապարակում էր նյութեր՝ նվիրված աշխարհում տեղի ունեցող քաղաքական կարևոր իրադարձություններին, պատմական խոշոր գործիչների կյանքին ու գործունեությանը, հայոց պատմության ուսանելի և հետաքրքիր էջերին: Իր տասնամյա գործունեության ընթացքում «Մասյաց աղավնի» ամսագիրը, ի թիվս այդ ամենի, որոշակի դեր է խաղացել նաև որպես «գիտամանկավարժական օրգան», դարձել է ժամանակի ազգային երկու դպրոցների՝ Հայկազյան ուսումնարանի և Խալիբյան դպրոցի տարեգրությունը: Եվ, վերջապես, «Մասյաց աղավնին» «ապագայի պատմաբաններին է հասցրել» 1860-ական թվականների «Հայ հոսանքների բուռն պայքարի պատկերը, կարևոր սկզբնաղբյուր դառնալով հայ հասարակական մտքի պատմության համար»[12]:

---

[6] Տե՛ս Կ ա ր ի ն յ ա ն. 1960, 378–430:
[7] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1974, 387:
[8] Կ ա ր ի ն յ ա ն. 1960, 379:
[9] Ն ե ր ս ի ս յ ա ն. 1982, 158:
[10] Տե՛ս Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1974, 387–388:
[11] Զ ա ր դ ա ր ե ա ն. 1911, 369:
[12] Հայ պարբերական մամուլի պատմություն. XVIII–XIX. 2006, 214:

«Մասյաց աղավնին» ամերիկյան պատերազմի առաջին փուլի մասին

Գ. վրդ. Այվազովսկին փորձառու խմբագիր էր, հրապարակախոս, պատմաբան, Ռուսաստանի և Օսմանյան կայսրության պատմությանը նվիրված ուսումնասիրությունների հեղինակ: Այդ հրապարակումների վերլուծությունը ցույց է տալիս, որ նա բավական քաջատեղյակ էր եվրոպական քաղաքական անցքերին, որոնց արձագանքում էր հիմնականում անկողմնակալ ու անաչառ դիրքերից: Նույն դիրքորոշումը չէր պահպանում իտալական ազգային, ազատագրական պայքարի նկատմամբ՝ դրսևորելով անթաքույց համակրանք: Գ. վրդ. Այվազովսկին դրվատում էր այդ պայքարի ղեկավարներ Ջուզեպպե Գարիբալդու, Վիտորիո Էմմանուիլ II-ի և Կամիլո Կավուրի ջանքերն ու Իտալիայի ազատագրության հույսերը կապում բացառապես նրանց հետ[13]:

«Մասյաց աղավնու» խմբագիրը բավական իրազեկված և իրատեսորեն պատմում է նաև ամերիկյան քաղաքացիական պատերազմի մասին: Պարբերականի լրատվության աղբյուրը հիմնականում ստացված պաշտոնական ու հեռագրական լուրերն էին և եվրոպական մամուլի հրապարակումներ: Բայց ամսագրի խմբագիրը չի սահմանափակվում սոսկ դրանք ամբողջությամբ օգտագործելով կամ վերաշարադրելով: Գ. վրդ. Այվազովսկին այդ լուրերը վերլուծում և ներկայացնում է իր ընկալման տեսանկյունից, որը կարևոր է հայ հասարակական մտքի ու պարբերական մամուլի պատմության համար:

Մ. Ներսիսյանի կարծիքով՝ «Մասյաց աղավնին», անդրադառնալով ամերիկյան քաղաքական պատերազմին, հավատարիմ դասակարգերի, սոցիալական տարբեր խավերի, խաղաղ գործակցություն ու միաբանություն քարոզող իր դավանանքին, փորձում էր գործը պատկերել այնպես, թե իբր Ամերիկայում տեղի են ունենում «ներքին երկպառակություններ, խռովություն և եղբայրասպան պատերազմ»[14]:

«Մասյաց աղավնու» խմբագիրն իրականում դասակարգային պայքարի տեսանկյունից չէր դիտարկում ամերիկյան քաղաքացիական պատերազմը, այլ հյուսիսային ու հարավային նահանգների միջև ազգային միաբանության և համերաշխության բացակայության: Ընդամին, Գ. վրդ. Այվազովսկին հայ հասարակական մտքի և պարբերական մամուլի պատմության մեջ այն եզակի խմբագիրներից է, ով դեռևս քաղաքացիական պատերազմ սկսվելուց երեք ամիս առաջ կանխատեսում էր ԱՄՆ հյուսիսային ու հարավային նահանգների միջև հակամարության անխուսափելիությունը: Պատերազմի պատճառները «չափազանց հակասական ու բազմաբնույթ են, որպեսզի ոչինչ դիմես դրանք արագորեն թվարկելու»[15]: Այդ բազմաթիվ պատճառներից մեկը Գ. վրդ. Այվազովսկին համարում էր 1860 թ. նոյեմբերի 6-ի նախագահական ընտրություններում հյուսիսի ներկայացուցիչ «Աբրահամ Լինքոլն անունով

---

[13] *Մովսիսյան. 2020, № 3, 75–98, Մովսիսյան. 2020, № 2, 50–65, 2021, № 1, 40–58, Մովսիսյան. 2021, № 1, պր. Ա, 91–117:*

[14] *Ներսիսյան. 1982, 158–159:*

[15] Бурин. 1988, 4.

խելացի մարդու» ԱՄՆ-ի «հասարակապետության նոր նախագահ ընտրվելը»: «Մասյաց աղավնին» դա համարում է ժամանակի «նշանաւոր անցքերուն մէկը», քանի որ Ա. Լինքոլնը «գերեվաճառութեան ու գերի պահելու սովորութեան սաստիկ թշնամի ճանչցուած է»[16]: Ամսագիրը, գերիներ և գերեվաճառություն ասելով, նկատի ունի ստրկությունը, որի պատճառով ԱՄՆ-ն «մեծ կռուոյ մէջ են իրարու դէմ»:

«Մասյաց աղավնին» իրավացի է. քաղաքացիական պատերազմի նախորդած 50 տարիների ընթացքում ստրկության հարցը ԱՄՆ-ի պատմության շարժիչ ուժն էր: Հարց, որի չհանգուցալուծվելու դեպքում երկիրը կարող է լուրջ սպառնալիքների առաջ կանգնել: Նախքան քաղաքացիական պատերազմի սկսվելը, ամսագիրը համոզմունք է հայտնում, որ ԱՄՆ-ի հարավային նահանգները հետզհետե հյուսիսային նահանգներից բաժանվելու են և «այս ցաւալի երկպառակութեան պատճառը գերիներու ազատութիւն տալու դիտաւորութիւնն է, որ նորընտիր Լինքոլն գահերեց ունի»[17]: Իրականում հյուսիսի ու հարավի երկպառակության պատճառները շատ էին, խորը և անհաղթահարելի: Ստրկության հարցը շատ կարևոր էր և «անխուսափելի հակամարտության»[18] պատճառ դարձավ, թեև Ա. Լինքոլնի կառավարությունն ի սկզբանե կասկածի տակ չէր դնում ստրկության առկայությունը հարավային նահանգներում: Առավել կարևոր էին ֆինանսական, հարկային ու առևտրատնտեսական հարցերը, որոնք, հարավցիների համոզմամբ, «հյուսիսի յանկիները» իրականացնում էին ի վնաս հարավի շահերի: Դաշնային բյուջեի հարկային եկամուտների 80 տոկոսը բաժին էր ընկնում հարավին, որը հյուսիսի արդյունաբերական ապրանքների գլխավոր սպառողն էր: Հարավը տարեկան արտահանում էր 213 մլն դոլարի արտադրանք, հիմնականում՝ բամբակ, իսկ հյուսիսը՝ ընդամենը 47 մլն դոլարի արտադրանք: Արտահանումը հարավի նավահանգիստներից իրականացնում էին միայն հյուսիսի նահանգներին պատկանող նավերով: Հարավի 3–4 հազար ստրկատեր ընտանիքներ բամբակի արտահանումից ստանում էին շահույթի 75 տոկոսը: Նրանք ահռելի հարստության տեր էին և չէին ցանկանում կորցնել իրենց տնտեսական շահավետ դիրքերը: Հյուսիսի ու հարավի տնտեսական հակասությունները սրվեցին հատկապես 1861 թ. մարտի 2-ի «Տարիֆների մասին» Ջասթին Մորրիլլի հեղինակած օրենքի ընդունումից հետո, որն արտահանվող ապրանքների վրա 1857 թ. մաքսային տուրքերն ավելացնում էր 47 տոկոսով: Այս օրենքը թշնամաբար ընդունվեց նույնիսկ Անգլիայում, որտեղ կողմնակից էին ազատ առևտրին[19]:

Հյուսիսի և հարավի նահանգների հակամարտության ու երկպառակության մյուս պատճառը քաղաքական իշխանության հարցն էր: Հարավի պլանտատորները 80 տարի շարունակ շահագործում էին դաշնային իշխանություններն իրենց շահադիտական նպատակների համար: Ա. Լինքոլնի նախագահ ընտրվելով՝ ակնհայտ դարձավ, որ նրանք իշխանությունը կորց-

[16] *«Մասյաց աղավնի» (Թեոդոսիա), 15. I. 1861, թիվ Բ, 23:*
[17] *«Մասյաց աղավնի», 15. I. 1861, թիվ Բ, 23:*
[18] *Տե՛ս* Бурин. 1988, 5; История США. 1983, 404.
[19] Иванян. 2008, 235; Иванов. 1960, 46–47.

րել են և պատրաստ չեն համակերպվել այդ իրողության հետ: Դա հավաստում էր նաև ժամանակի ամերիկյան մամուլը:

Անհերքելի իրողություն է, որ ԱՄՆ-ում «քաղաքացիական պատերազմից առաջ տեղի ունեցավ լիակատար բաժանում ժողովրդի մտքերում»[20]: Ամերիկացիները բաժանվեցին ստրկության կողմնակիցների և հակառակորդների, որոնց միջև անխուսափելի հակամարտությունը դարձավ միայն ժամանակի հարց:

«Մասյաց աղավնու» կարծիքով՝ հակամարտությունը հրահրում էին հարավային նահանգները, որոնք «արդէն շատոնց առիթ կփընտռէին հիւսիսային նահանգներէն զատուելու և ինքնագլուխ լինելու»[21]: ԱՄՆ-ի ուժն «այս երկպառակութեամբ շատ պիտի տկարանայ», եթե նախագահ Ա. Լինքոլնը «զօրաւոր դարման մը չգտնէ խռովութեանց»[22]: Ամսագիրն այնուհետև հայտնում է, որ ԱՄՆ-ի հարավային 7 նահանգները, 5 մլն բնակչությամբ, անջատվեցին հյուսիսային նահանգների հետ դաշնությունից և «նոր տէրութիւն մը ձևացան Ամերիկեան հարաւային Դաշնակցութիւն անունով»: Նրանք իրենց մայրաքաղաք են դարձրել Ալաբամա նահանգի Մոնթգոմերի քաղաքը, նախագահ ընտրել Ջեֆֆերսոն Դևիսին և նոր Սահմանադրություն ընդունել: Հյուսիսային նահանգների նախագահ Ա. Լինքոլնը, ով Վաշինգտոնում ստանձնել է իր պաշտոնը, ասում են, թե մտադրություն ունի «հաշտութիւն և միաբանութիւն ընելու հարաւային նահանգաց հետ»[23]:

«Մասյաց աղավնին» ներկայացնում է Ա. Լինքոլնի նախագահ ընտրվելուց հետո ԱՄՆ-ում ստեղծված վիճակը, որի փլուզման հիմքը 1860 թ. դեկտեմբերի 20-ին դրեց Հարավային Քարոլինա նահանգը՝ հայտարարելով ԱՄՆ-ի կազմից դուրս գալու մասին: 1861 թ. փետրվարի 8-ին խռովարար 7 նահանգները հայտարարեցին Համադաշնություն ստեղծելու մասին, ընդունեցին Սահմանադրություն և ձևավորեցին ժամանակավոր կառավարություն՝ Միսսիսիպի նահանգից նախկին սենատոր Ջեֆֆերսոն Դևիսի գլխավորությամբ: Համադաշնության Սահմանադրության համաձայն՝ ստրկությունը նոր պետության տնտեսական և քաղաքական կառուցվածքի հիմքն էր, որով նահանգները զրկվում էին Համադաշնությունից ազատ դուրս գալու իրավունքից[24]: «Մասյաց աղավնին» ճիշտ էր տեղեկացված 1861 թ. մարտի 4-ին ԱՄՆ նախագահի պարտականությունները պաշտոնապես ստանձնած Ա. Լինքոլնի հրապարակային առաջին ելույթի բովանդակությանը: «Ես գտնում եմ, – հայտարարեց նա, – որ ... այս նահանգների միությունը հավերժ է... մենք չենք կարող բաժանվել»[25]: Նա հավաստիացրեց, որ իր կառավարությունը չի խախտելու ստրկության սկզբունքները և որևէ մտադրություն չունի ուղղակի կամ անուղղակի միջամտել ստրկության համակարգի գործունեությանն այն նահանգներում, որտեղ այն գո-

---

[20] Foner. 1980, 53.

[21] *«Մասյաց աղավնի», 01. III. 1861, թիվ Ե, 58:*

[22] *«Մասյաց աղավնի», 01. III. 1861, թիվ Ե, 58:*

[23] *«Մասյաց աղավնի», 01. IV. 1861, թիվ Է, 83:*

[24] *Տե՛ս* Родс. 2017, 10; История США. 1983, 406; Бурин. 1988, 7; Иванян. 2008, 225; Куропятник. 2009, 108; Иванов. 2002, 50–51.

[25] Родс. 2017, 5; Бурин. 1988, 8.

յություն ունի[26]: Կտրականապես մերժելով ստրկատիրական նահանգների անջատվելու իրավունքը՝ Ա. Լինքոլնը զգուշացրեց, որ իր կառավարությունը հարավցիների վրա չի հարձակվի, եթե նրանք հանդես չգան որպես ագրեսորներ[27]:

«Մասյաց աղավնին», չանդրադառնալով պատերազմի ընթացքին, գրում է, որ Ամերիկայում գրեթե երկու ամիս է, ինչ պատերազմ է սկսվել հյուսիսի և հարավի նահանգների միջև: Պարբերականի տեղեկություններով՝ «ամերիկացի համազգի եղբայրները անգթաբար կջարդեն մէկզմէկ իբրև անհաշտելի թշնամիք»[28]:

Անդրադառնալով 1861 թ. ամռանը հյուսիսի ու հարավի միջև սուր հակամարտությանը՝ «Մասյաց աղավնին» առանց կոնկրետ փաստեր վկայակոչելու գրում է, որ Ամերիկայի մէջ պատերազմը «օրէ օր սաստկանալու վրայ է, երկու կողմէն ալ յաղթեր ու յաղթուեր են մեկ երկու անգամ»[29]: Այս լրատվությունից մեկ ամիս անց ամսագիրը կրկին ընդգծում է, որ երկրում «համազգային պատերազմը մինչև ցայժմ դադրելու պէս չերևնար, ընդ հակառակն, օրէ օր աւելի կբորբոքի»[30]: Դրա վկայությունը պարբերականը համարում է Մանասաս քաղաքի մոտ մեծ կռիվը, որտեղ հյուսիսի զորքը պարտվել է: Ամսագիրը գրում է, որ շուտով կռիվ պիտի լինի նաև Պոտոմակ գետի մոտ: Մտավախություն կա, որ հարավի զորքերը շուտով կհարձակվեն մայրաքաղաք Վաշինգտոնի վրա: ԱՄՆ Կոնգրեսը որոշել է, և նախագահն էլ վավերացրել է այդ որոշումը, ըստ որի՝ հարավային նահանգներում ծառայության մէջ գտնվող ստրուկները, եթե անցնեն հյուսիսի կողմը, «իսկոյն ազատ համարուի: Այս բանով հավանական է որ վերջապէս յաղթութիւնը ձեռք ձգողները հիւսիսայինք լինին»[31]:

«Մասյաց աղավնին», ուշադրությամբ հետևելով պատերազմի ընթացքին, այդ մասին առանձնապես մանրամասնություններ չի հայտնում, այլ փաստում է այն իրողությունը, որ ԱՄՆ-ի «քաղաքացիական պատերազմը քանի կերթայ աւելի կսաստկանայ»[32]: Ամսագիրը հյուսիսի ու հարավի միջև հակամարտությունն այդ իրադարձությունների սկզբում ներկայացնում էր որպես համազգային պատերազմ, ապա ամիսներ անց ընթացող ռազմական գործողությունները իրավացիորեն գնահատում որպես քաղաքացիական պատերազմ: «Մասյաց աղավնին» միաժամանակ կռահում է, որ պատերազմը չի կրելու սոսկ ամերիկյան բնույթ և անհանգստացնելու է եվրոպական պետություններին, առաջին հերթին՝ Անգլիային: Պատերազմից ամերիկացիների երկպառակությունը ոչ միայն իրենց երկիրը պիտի թուլացնի, այլև «Անգլիային նույնպես մեծամեծ վնասներ պիտի լինեն ասկեց»[33], եթե նորընտիր նախագահ Ա. Լինքոլնը հարավի խռովությունը չկասեցնի: Պարբերականը

---

[26] *Տե՛ս* Куропятник. 2009, 111; Иванов. 1984, 123.

[27] История США. 1983, 408; Иванян. 2008, 230; Иванов. 1960, 42–43.

[28] *«Մասյաց աղավնի», 15. VI. 1861, թիվ ԺԲ, 144:*

[29] *«Մասյաց աղավնի», 01. VIII. 1861, թիվ ԺԵ, 180:*

[30] *«Մասյաց աղավնի», 01. IX. 1861, թիվ ԺԷ, 204:*

[31] *«Մասյաց աղավնի», 01. IX. 1861, թիվ ԺԷ, 204:*

[32] *«Մասյաց աղավնի», 01. X. 1861, թիվ ԺԹ, 223:*

[33] *«Մասյաց աղավնի», 01. III. 1861, թիվ Ե, 58:*

համոզված է, որ ամերիկյան քաղաքացիական պատերազմը «եւրոպական տէրութեանց աչքը իւր վրայ կդարձնէ. մանաւանդ որ մեծ վնաս է այն Անգղիոյ, ուստի և բոլոր Եւրոպայի առուտուրին»[34]*:*

«Մասյաց աղավնին» կռահում է, որ ամերիկյան քաղաքացիական պատերազմը պետք է իր վրա հրավիրի եվրոպական պետությունների՝ հատկապես Անգլիայի ուշադրությունը: Ամսագիրը դա կապում է ամենից առաջ առևտրական խնդրի հետ՝ անտեսելով հարցի քաղաքական կողմը: Այդպես էին մտածում նաև հարավի ստրկատերերը, որոնք պատերազմ սկսելով՝ հույս ունեին Անգլիայի ու Ֆրանսիայի օգնությամբ հաղթանակ տանել: Հյուսիսի նկատմամբ հարավի առավելությունը փորձառու և հմուտ զինվորական ղեկավար կադրեր ու մարտունակ բանակ ունենալն էր, որը զգացնել տվեց հատկապես պատերազմի սկզբում: Բայց արդյունաբերական հյուսիսը խոռվարար հարավին գերազանցում էր՝ ունենալով բարձր տնտեսական զարգացման մակարդակ, ֆինանսներ, առավել փորձված վարչական կառավարում, ներքին երկաթուղային և ջրային հաղորդակցություն: Հյուսիսի 22 մլն բնակչությամբ 23 նահանգներին դիմակայում էին հարավի 11 նահանգները՝ մոտ 13 մլն բնակչությամբ, որից 4 մլն սևամորթ ստրուկներ էին: Հյուսիսը կարող էր բանակ զորակոչել 2,9 մլն, իսկ հարավը՝ 1,9 մլն մարդ: Հյուսիսում էր կենտրոնացված գրեթե ողջ արդյունաբերությունը, բանկային կապիտալի չորս հինգերորդը, 31 հազար միլ երկաթուղային ճանապարհներից 22 հազար միլը[35]*: Չնայած դրան՝ հարավը պատերազմ սկսեց՝ վստահ լինելով՝ զենքի կկոչի մարտունակ ամբողջ սպիտակամորթ բնակչությանը և անպայման կստանա Անգլիայի աջակցությունը, որի տնտեսությունը չի կարող աշխատել առանց հարավի բամբակի: Համաձայնության ղեկավարները կուրորեն հավատում էին «թագավոր բամբակի» ամենազոր ուժին:*

1861 թ. նոյեմբերի 8-ին անգլիական «Թրենթ» առևտրական նավի հետ կապված անգլո-ամերիկյան միջադեպ տեղի ունեցավ, որին անդրադառնում է «Մասյաց աղավնին»: Ամսագրի տեղեկություններով՝ Անգլիայի և ԱՄՆ-ի միջև «տարաձայնություններ են ծագել»: Նրանց «գժտության պատճառը» պարբերականը իրավացիորեն համարում է ամերիկյան «Սան Ջասինտո» ռազմանավի հրամանատարի կողմից Անթիլյան կղզիների մոտ անգլիական «Թրենթ» շոգենավում իրականացրած գործողությունը: Նավապետն անգլիացիներին մեղադրել է զինվորական մաքսանենգության մեջ և ձերբակալել Մեյսոն ու Սլիդել գործակալներին, ովքեր հարավի նահանգների կողմից նամակ էին տանում Անգլիա: Անգլիական իշխանություններն այս միջադեպից խիստ վրդովվել են և Վաշինգտոնում իրենց դեսպան Լայոնսին հանձնարարել ամերիկյան կողմից բացատրություն ստանալ տեղի ունեցածի կապակցությամբ, և պահանջել ամերիկացի նավապետի պաշտոնանկությունը: Ամսագիրը հավանական չի համարում, որ ամերիկացիները և անգլիացիներն այս միջադեպի պատճառով կարող են պատերազմական գործողություններ սկսել՝ չնայած Անգլիան մեծ թվով նավեր է ուղարկել Կանադայի ափերը,

---

[34] *«Մասյաց աղավնի», 01. X. 1861, թիվ ԺԹ, 223:*

[35] Ф о с т е р. 1953, 381.

իսկ ամերիկացիներն ամրացնում են իրենց ծովափերը: Ի վերջո, ամերիկացիները զիջեցին և «խաղաղութիւն եղաւ»[36]:

«Մասյաց աղավնու» կարծիքով՝ այս հակամարտության հանգուցալուծումը փոխզիջում էր: Ամերիկացիները գնացին այդ քայլին, որովհետև իրենց ռազմանավերը զիջում են անգլիական ռազմանավերին: Բայց ամերիկացիները կարող են, ըստ ամսագրի, իրենց առևտրական նավերը համալրել 2–3 հազար հանդուգն ու կտրիճ նավաստիներով և Ատլանտյան օվկիանոսում կամ Ասիայի ափերին ծովահենությամբ զբաղվել ու անգլիացիներին մեծ վնաս պատճառել: Մյուս կողմից՝ անգլիացիները հյուսիսից դժգոհ են և «սաստիկ ոխ ունեն» նրանց նկատմամբ, բայց, քանի որ կախված են ամերիկյան բամբակի ներկրումից, որի պատճառով իրենց ֆաբրիկաները կփակվեն ու վաճառականությունը կտուժի, կոնֆլիկտը խաղաղությամբ վերջացրեցին:

«Մասյաց աղավնու» կարծիքով՝ չնայած անգլո-ամերիկյան «գժտությունը դադարեց», բայց նրանց միջև «կատարեալ համաձայնութիւն լինելը շատ դժուար բան է»: Ամսագիրը մտավախություն է հայտնում, որ հակամարտության նոր պատճառներ կծագեն, եթե «երկու կողմեն խոհական մարդիկ անհոգութիւն ընեն»: Բայց առայժմ դա տեղի չի ունենում, իսկ անգլիացիները դժգոհում են՝ հյուսիսցիները շրջափակել են հարավի նավահանգիստները, որով իրենց առևտրին մեծ վնաս է պատճառվում[37]:

Ամսագիրը ճիշտ դատողություն է անում, որովհետև դեռ պատերազմի սկզբում Ա. Լինքոլնի հրամանով շրջափակվեցին հարավի նավահանգիստները՝ սկսած Հարավային Քարոլինայից մինչև Թեքսաս: Ավելի ուշ շրջափակման ենթարկվեցին նաև Հյուսիսային Քարոլինայի և Վիրջինիայի նավահանգիստները[38]:

«Մասյաց աղավնու» խմբագիրը կարևորում է Ռուսաստանի դիրքորոշումն ամերիկյան քաղաքացիական պատերազմի նկատմամբ, ցույց տալիս, որ ռուսաց կայսրը խնդրի խաղաղ կարգավորման կողմնակից է: Իր կարծիքը հիմնավորելու համար Ռուսաստանի նկատմամբ բարեհաճ վերաբերմունք ունեցող Գ. վրդ. Այվազովսկին տպագրում է Վաշինգտոնում ռուսաց դեսպան Է. Ստեկլին ուղղված արտգործնախարար Ա. Գորչակովի նամակից մի հատված: Նա գրում էր՝ ռուսաց կայսրը հավատում է, որ ԱՄՆ-ի «բնակիչները իրենց գործնական ողջամտությամբը շուտով կճանչնան իրենց ճշմարիտ օգուտն ու վնասը: Մեր ինքնակալը բարեբաղդ պիտի համարի ինքզինքը՝ թէ որ Ամերիկայի կառավարութեան անդամները և երկու կողմին ալ խօսքի տէր մարդիկը ամէն տեսակ հնարք բանեցընեն՝ գրգռուած կիրքերը հանդարտեցնելու և այս նպատակին դիւրաւ հասնելու համար: Աշխարհիս մէջ իրարու ներհակ այնպիսի շահեր չկան ամենևին որ կարելի չլինի զանոնք միաբանել՝ երբոր մարդիկ սրտանց ու հաստատ կերպով հետամուտ լինին արդարութեան և չափավորութեան»[39]: Հավատի մեջբերելով Ա. Գորչակովի ճեպագիրը[40], Գ. վրդ. Այվազովսկին հաղորդագրութ-

[36] *«Մասյաց աղավնի», 01. II. 1861, թիվ Գ, 36:*
[37] *«Մասյաց աղավնի», 01. II. 1862, թիվ Գ, 36:*
[38] Иванян. 2008, 231; Бурин. 1988, 30–31.
[39] *«Մասյաց աղավնի», 01. X. 1861, թիվ ԺԹ, 223:*
[40] *Տե՛ս* Иванов. 1984, 76.

յան վերջին նախադասությունը ընդգծում է՝ նշելով, որ դիտմամբ է խոշոր տառերով գրել ռուսաց նախարարի «այս ճշմարիտ ու խորախորհուրդ խոսքերը»:

Անդրադառնալով պատերազմի հետագա ընթացքին՝ «Մասյաց աղավնին» գրում է, որ առաջվա պես ընթանում է անգիջում պայքար՝ առանց ամենևին թուլանալու կամ դադարելու, և «շատ դժուար է այժմէն գուշակելը թէ վերջապէս ում պիտի մնայ յաղթութիւնը»[41]: Ամսագիրը կարծիք է հայտնում, որ Մանասսասի կռվից հետո հյուսիսցիները դժվարության առաջ են կանգնած, իսկ հարավցիներն այդ հաղթանակից հետո ավելի ուժեղ են զգում իրենց: Ամսագրի դիտարկմամբ՝ հյուսիսցիների խնդիրը գնալով դժվարանում է, որոնց վերջին անհաջողությունից հարավցիները ուժեղանում են: Ջորջ Մաք Քլելլանը զրկվել է հյուսիսի զորքերի հրամանատարությունից, ում փոխարինել է Էմբրոուզ Բերնսայտը: Նա թեև բավական անուն ուներ, բայց իր հրամանատարությունը սկսեց անհաջողությամբ: Ֆրեդերիկսբուրգում տեղի ունեցած առաջին ճակատամարտում նա «ահագին կորուստներ ունեցավ՝ 10 հազար սպանված ու վիրավոր: Այս լուրն ազատական Ամերիկան սիրողների «սիրտը տրտմեցուց», իսկ հարավի կողմնակիցներին մեծ ուրախություն պատճառեց: Հյուսիսցիները դժվարին կացության մեջ են հայտնվել, 20 հազար մարդ դասալիք է դարձել, իսկ հարավցիներն այդ հաջողությունից ոգևորված՝ այժմ համոզված են, որ «հաղթությունն իրենց ձեռքում է»[42]: «Մասյաց աղավնին» ճիշտ էր տեղեկացված. 1862 թ. օգոստոսի 28-ին նախ գեներալ Ջոն Քոուփը պարտություն կրեց Բալլ Ռուանի մոտ, իսկ դեկտեմբերի 13-ին գեներալ Է. Բերնսարդը Ֆրեդերիկսբուրգում ուղղակի ջախջախվեց[43]:

Զանդրադառնալով 1862 թ. պատերազմական հետագա գործողություններին՝ «Մասյաց աղավնին» շարունակում է մնալ այն կարծիքին, որ քաղաքացիական պատերազմի պատճառը «գերիներու ազատութեան խնդիրն է»: Ամսագիրն ԱՄՆ-ն բաժանում է երկու մասի՝ հյուսիսային և հարավային: Հյուսիսային նահանգներում չկան ստրուկներ, իսկ հարավի նահանգներում ստրուկները շատ աշխատանքներ ու գործեր են անում: Ուստի «երկու կուսակցություն է ձևավորվել Ամերիկայում՝ եղծողականք և գերեվարք»: Ըստ պարբերականի՝ եղծողականները, ովքեր իրենց աբոլիցիոնիստ են անվանում, ցանկանում են՝ «գերի բանեցընելու սովորութիւնը վերացուի իրենց մէջէն»: Գերեվարները (ստրկատերերը) պահանջում են, որ «իրենց գերիներէն ունեցած շահը չխափանուի չդադարի»: Նրանք «զանազան իմաստութիւններով կՁանան ցուցընել թէ գերի բանեցընելը օրինաւոր և հարկաւոր բան է և հակառակ չէ քրիստոնեութեան և մարդկութեան»[44]:

«Մասյաց աղավնու» այս ու հետագա հրապարակումներից պարզվում է, որ ամսագիրը ստրկության կողմնակից չէ և չի ընդունում նրանց աշխատանքի շահագործումը: Կարելի է ասել, որ պարբերականի համակրանքը հյուսիսի ու հարավի հակամարտությունում հյուսիսցիների կողմն է: Ամ-

---

[41] *«Մասյաց աղավնի», 01. II. 1862, թիվ Գ, 36:*
[42] *«Մասյաց աղավնի», 15. I. 1862, թիվ Բ, 27–28:*
[43] *Տե՛ս* Куропятник. 2009, 152; Бурин. 1988, 49–56.
[44] *«Մասյաց աղավնի», 01. XII. 1861, թիվ ԻԳ, 271:*

սագրի կարծիքով՝ ամերիկյան պատերազմի պատճառն այնպիսի հայտնի խնդիր է, որ «արդարութիւն ճանչցող ու սիրող մարդը դիւրաւ կրնայ գուշակել թէ երկու կողմին որը պիտի յաջողութիւն գտնէ»: Հյուսիսում ցանկանում են՝ ստրուկ դնելն ու վաճառելը վերանա, իսկ հարավցիները դեմ են, որ այս «շահաբեր գործողութենէն զիրենք ետ քաշելու ոչ ոք իրաւունք չունի: Որչափ որ յայտնի է առաջիններուն իրաւունքը, նոյնչափ պայծառ կտեսնուի նաև հարաւայիններուն անիրաւութիւնը»[45], – եզրակացնում է ամսագիրը: «Մասյաց աղավնին» սրանով հստակ դիրքորոշում է արտահայտում ստրկության վերաբերյալ՝ հարավցիների կողմից դրա կիրառումը համարելով «անիրավություն»:

Ամսագրի իրավացի դիտարկմամբ՝ պատերազմում հաջողության հասնելու գործում հարավցիներն իրենց հույսը դրել են Անգլիայի ու Ֆրանսիայի վրա, իբր թե նրանք իրենց պիտի պաշտպանեն ու ստիպեն հյուսիսցիներին համաձայնվել հարավցիների անջատմանը, որպեսզի նրանք «ինչպես որ կուզենէ այնպէս կառաւարուին»: Եթե խնդիրը մնա ֆրանսիական և անգլիական վաճառականներին, դատողություններ է անում ամսագիրը, ապա նրանք, թերևս, այդպես էլ պետք է վարվեն, որպեսզի իրենց բամբակի ֆաբրիկաներն աշխատեն, ու հարավի բամբակն անպակաս Եվրոպա առաքվի: Բայց, որովհետև «բաժանասիրաց կամքին կատարուելովը՝ մարդավաճառութեան գարշելի սովորութիւնն ալ պիտի յաւիտեան հաստատուէր Ամերիկայի մէջ. և Եվրոպայի լուսաւորեալ տէրութիւնները չէին կրնար այս բանիս հաւանիլ, հիւսայինները քանի գնացին զօրացան, հարաւայինները շատ տեղ յաղթուեցան, և կերևնայ թէ քիչ ատենէն բոլորովին պիտի նուաճուին»[46]:

«Մասյաց աղավնին» ճիշտ է կռահում հարավի ստրկատերերի պլանները, ովքեր մտադիր էին հասնել Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից Համադաշնության ճանաչմանը: Նրանք հույս ունեին, որ Անգլիան, ելնելով իր առևտրատնտեսական շահերից, զավթախուժում կիրականացնի հյուսիս-ամերիկյան նահանգներում և հենց այդ նպատակով է զորք ուղարկել Կանադա: Հարավցիների հույսերը չարդարացան նաև դաշնային կառավարության կողմից բամբակի արտահանման արգելքի հարցում, որը, նրանց կարծիքով, կարող էր մոգական հետևանքներ ունենալ անգլիական և ֆրանսիական արդյունաբերության համար: Բայց շուտով ակնհայտ դարձավ, որ փողի կարիք զգացող ստրկատերերն իրենք սկսեցին բամբակ արտահանել՝ փորձելով ճեղքել հարավային նավահանգիստների շրջափակումը: Բացի այդ, 1861 թ. սովը եվրոպացիներին ստիպեց ավելի շատ մտահոգվել հացահատիկի ներկրման մասին, որն իրենց մատակարարում էր արդյունաբերական հյուսիսը, քան թե՝ բամբակի:

Սրանք էին հարավի առաջարկությունների մերժման իրական պատճառները, որոնք «Մասյաց աղավնին» չի ընկալում կամ տեղեկատվության պակասի պատճառով ճիշտ չի պատկերացնում: Ամսագրի համար ստրկության խնդիրն այն առանցքն էր, որի շուրջը պտտվում էին քաղաքացիական

[45] *«Մասյաց աղավնի», 15. IV. 1862, թիվ Ը, 94:*
[46] *«Մասյաց աղավնի», 15. IV. 1862, թիվ Ը, 94:*

պատերազմի գլխավոր իրադարձությունները: Այս մտայնությունից ելնելով՝ պարբերականը հարավցիներին չսատարելու «եվրոպական լուսավորյալ պետությունների» դիրքորոշումը բացատրում է հարավում «մարդավաճառության գարշելի սովորույթով»:

Հետագա հրապարակումներում «Մասյաց աղավնին» այլ տեսանկյունից է ներկայացնում քաղաքացիական պատերազմի դրդապատճառները: Ամսագիրը հղում է անում քաղաքագետներից մեկին, ըստ որի, երբ որևէ երկրում քաղաքացիական պատերազմ է սկսվում, այնտեղ «իզուր կփնտռես իրաւանց ոյժը վասնզի հոն տիրապետողը նիւթական ոյժն ու բռնութիւնն է»[47]: Համաձայնվելով այս մտքին՝ ամսագիրը հռետորական հարց է տալիս. միթե՞ իրավունք կարելի է փնտրել մի կռվում, որտեղ «երկու կողմից կռվողներն են միանգամայն իրարու դեմ և բողոքիչ և դատավոր և դահիճ»[48]: Այս տեսանկյունից նայելով ամերիկյան քաղաքացիական պատերազմին՝ «Մասյաց աղավնին» եզրակացնում է՝ այսպիսի խղճուկ վիճակում են արդեն երկու տարի Հյուսիսային Ամերիկայի բնակիչները, ովքեր մի քանի տարի առաջ «նախանձելի օրինակ էին միաբանութեան և ամէն տեսակ յառաջադիմութեան»[49]:

Գ. վրդ. Այվազովսկին «ազգային ուժերի համախմբման ջերմ կողմնակից էր»[50] և այս տեսանկյունից դիտարկելով հյուսիսի ու հարավի անհաշտ պայքարը՝ ափսոսանք է հայտնում ԱՄՆ-ի ազգային և քաղաքական պառակտման համար: Ելնելով այս իրողությունից՝ նա ԱՄՆ-ն չի համարում համախմբված, միասնական և ամբողջական պետություն, այլ պառակտված, միմյանց դեմ պատերազմող հյուսիս ու հարավ, որոնք դաժանաբար կործանում են միմյանց: ԱՄՆ-ի երբեմնի մեծությունն ու հզորությունն իր ընթերցողներին ներկայացնելու համար ամսագիրը բավական ընդարձակ հոդված է նվիրում Նյու Յորք «հոյակապ քաղաքին»՝ այն համարելով համայն «Ամերիկայի գլխաւոր քաղաքը՝ հաւասար Եւրոպայի մեծամեծ մայրաքաղաքաց»: Ամերիկայի «ամենէն վաճառաշահ ու ամենէն բազմամարդ» քաղաքի օրինակով պարբերականը եզրակացնում է. «... որքան դժուարին բան է աշխարհք մը չինելն ու պայծառացրնելը՝ միաբանութեամբ ու խաղաղութեամբ, և որչափ դիւրին՝ զայն քանդելն ու հիմնայատակ կործանելը եթէ երկպառակութիւնն ու խռովութիւնը տիրապետէ անոր մէջ»[51]:

Երկպառակված Ամերիկայի մասին իր միտքը հիմնավորելու նպատակով «Մասյաց աղավնու» խմբագիրը վկայակոչում է ֆրանսիական նշանավոր գրող, դիվանագետ, ռոմանտիզմի հիմնադիրներից Ֆրանսուա Շատոբրիանին: «Մասյաց աղավնին» ֆրանսերենից թարգմանաբար ներկայացնում է նրա «Անդրադամբան հիշատակ» գրքից մի հատված, որտեղ նա դատողություններ էր անում, թե արդյոք «նահանգները իրարմէ պիտի չբաժանուի՞ն ..., մթէ հիւսիսային և հարաւային նահանգները հակառակ չեն իրարու, թէ իրենց հոգւովը և թէ իրենց շահերովը»: Ֆր. Շատոբրիանը հռե-

---

[47] *«Մասյաց աղավնի», 01. XI. 1862, թիվ ԻԱ, 251:*
[48] *«Մասյաց աղավնի», 01. XI. 1862, թիվ ԻԱ, 251:*
[49] *«Մասյաց աղավնի», 01. XI. 1862, թիվ ԻԱ, 251:*
[50] *Կարինյան. 1960, 389:*
[51] *«Մասյաց աղավնի», 15. XI. 1862, թիվ ԻԲ, 260:*

տորական հարցադրում էր անում այն մասին, թե «ի՞նչպէս պիտի կարենայ դիմանալ» ԱՄՆ-ը, «եթե հանկարծ պատերազմ բացուի իրեն վրայ»[52]: Ամսագիրը փաստում է, որ նրա՝ 40 տարի առաջ կատարած կանխատեսումը իրականություն է դարձել:

Ամերիկյան քաղաքացիական պատերազմը լուսաբանելիս «Մասյաց աղավնին» հետևողականորեն պաշտպանում և առաջ է տանում այն միտքը, որ պատերազմի գլխավոր պատճառը ստրկության խնդիրն է: Ամսագիրը դրան այնքան մեծ տեղ է տալիս և կարևորում, որ «Ամերիկայի սև գերիներն ու նոցա հայրենիքը՝ Լիպերիա» վերնագրով հոդվածում հանգամանորեն ներկայացնում է Ամերիկայում ստրկության ծագման պատմությունը[53]: Բայց, զարմանալիորեն, ամսագիրը չի անդրադառնում քաղաքացիական պատերազմի ընթացքում բեկում մտցրած երկու կարևոր հարցի՝ հոմսթեդների մասին օրենքին և ստրկության վերացմանը: 1862 թ. մայիսին ամերիկյան կոնգրեսն ընդունեց օրենք, որով հյուսիսի բանակին անդամագրված յուրաքանչյուր քաղաքացի կարող էր պատերազմի ավարտից հետո ոչ մեծ գումար վճարելով՝ 160 ակր (65 հա) հող ձեռք բերել ԱՄՆ արևմտյան հողերում: Դա հզոր հարված էր հարավի ստրկատերերին, որոնք չէին կարող այստեղ հողի տեր դառնալ: 1862 թ. սեպտեմբերի 22-ին նախագահ Ա. Լինքոլնի հրամանագրով, եթե մինչև 1863 թ. հունվարի 1-ը խռովարար նահանգները չէին վերադառնում դաշնային պետության կազմ, ապա նրանց տարածքում ապրող բոլոր ստրուկները հայտարարվում էին «հավերժ ազատ»: 1863 թ. հունվարի հրամանագրով ստրկությունը հայտարարվում էր վերացված բոլոր նահանգներում[54]:

«Մասյաց աղավնին» պատերազմի երկրորդ փուլի մասին

Շարունակելով ստրկության վերացման կարևորագույն հարցը՝ «Մասյաց աղավնին» շարունակում է կենտրոնանալ ամերիկացիների պառակտման հարցի վրա, որը համարում է նրանց դժբախտության պատճառը: Ամսագիրը հայ պարբերական մամուլի պատմության մեջ այն եզակիներից է, որը, ամերիկյան քաղաքացիական պատերազմը լուսաբանելիս ընդգծելով հյուսիսի ու հարավի միջև «ներքին երկպառակությեանց մեծ վնասը» ամերիկյան ժողովրդի համար, միաժամանակ հայությանը հորդորում էր դասեր քաղել ամերիկացիների «եղբայրասպան պատերազմից» և լինել միասնական ու համախմբված, չզբաղվել ներքին վեճերով և աննպատակ կռիվներով: Ազգային միաբանությունը, համախմբվածությունը և միասնականությունը Գ. վրդ. Այվազովսկու գաղափարական համոզմունքն էր:

«Մասյաց աղավնու» կարծիքով՝ մինչև քաղաքացիական պատերազմը ԱՄՆ-ն ազգային միասնության և համերաշխության «մեծ խրատական օրինակ» էին: Բայց «իրենց գեղեցիկ անուանը բոլորովին ներհակ անմիաբանությամբ այս երկու տարի է բոլոր աշխարհս կսարսափեցնեն իրենց եղբայ-

[52] *«Մասյաց աղավնի», 01. IV. 1863, թիվ 7, 107:*

[53] *«Մասյաց աղավնի», 01. XII. 1861, թիվ ԻԳ, 271–280:*

[54] *Տե՛ս* История США. 1983, 420–422; Иванян. 2008, 442–443; Иванов. 1960, 110; Куропятник. 2009, 188; Бурин. 1988, 47; Иванов. 1984, 168.

բասպան ահաւոր պատերազմովը»[55]: Ամսագիրը հանդիմանում է հյուսիսին ու հարավին երկպառակության, եղբայրասպան պատերազմ մղելու, փոխզիջումների չգնալու և հաշտության եզրեր չփնտրելու համար: Պարբերականն այն կարծիքին է, որ ամերիկացիների փոխարեն հաշտության հարցով ավելի շատ մտահոգված են եվրոպական երկրները: «Մասյաց աղավնին» մամուլից տեղեկացված էր, որ եվրոպական երեք մեծ տերությունները միմյանց հետ բանակցում են, որպեսզի միջնորդեն հաշտություն կնքել «այն երկպառակտեալ աշխարհին»: Ամսագիրը հույս է հայտնում, որ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը կարող են ելք գտնել ու այնպիսի հաշտության առաջարկություն անել, որը «իրենց պատվոյն և շահուն օգտաւէտ լինի ... և թէ երկպառակ ազգին ընդունելի և պտղաւէտ»[56]:

«Մասյաց աղավնին» իրավացի է այնքանով, որ Անգլիան ու Ֆրանսիան, միջամտելով ամերիկյան գործերին, առաջին հերթին առաջնորդվում էին իրենց տնտեսական և քաղաքական շահերով: Երբ Անգլիայում հայտնի դարձավ ԱՄՆ-ում ստրկությունը վերացնելու Ա. Լինքոլնի որոշումը, ստրկատիրական հարավի ճանաչման խնդիրը կառավարությունն իր օրակարգից հանեց: Հակառակ անգլիական կաբինետի որոշման՝ Ֆրանսիան հարավի օգտին հանդես գալու նոր փորձ արեց:

Պատերազմում հաշտություն կնքելու կողմնակից «Մասյաց աղավնին» 1863 թ. ամռանը հրապարակումներից մեկում ափսոսանք է հայտնում, որ ԱՄՆ-ի «գեղեցիկ անունը» կրող երկրում «բոլորովին ներհակ անմիաբանությամբ այս երկու տարի է բոլոր աշխարհիս կսարսափեցնեն իրենց եղբայրասպան ահաւոր պատերազմովը»[57]: Ամսագիրը միաժամանակ պատերազմին վերջ տալու լավագույն միջոցը համարում է հյուսիսի հաղթանակը, որը հնարավորություն կտա պահպանել ԱՄՆ-ի ամբողջականությունը:

1863 թ. պատերազմական գործողություններին ուշադրությամբ հետևող «Մասյաց աղավնին» կարծիք է հայտնում՝ հյուսիսի հաղթանակներով Ամերիկայի խնդիրը մեծ առաջադիմություն ունեցավ, սակայն «մեծ դժբաղտութեամբ», որն ամսագիրը համարում է 1863 թ. մայիսի 27-ին Լուիզիանա նահանգում՝ Պորտ Հադսոնի մոտ, հյուսիսի զորքերի հրամանատարներից գեներալ Ջ. Միդի և հարավի զորքերի հրամանատար Ռ. Լիի «սաստիկ դիմակալութեամբ» մարտը և երկուստեք կրած 50 հազար մարդկային կորուստները: Պարբերականի կարծիքով՝ «այս սարսափելի կոտորածը» հյուսիսի օգտին էր, որովհետև Ջ. Միդը մտավ քաղաք, ապա հետապնդեց հակառակորդին, բայց չկարողացավ Պոտոմակ գետն անցնել սաստիկ վարարման պատճառով: Այլապես նա Էնտիտեմի հովտում կջախջախեր նահանջող հարավի զորքին: Եթե գեներալ Ռ. Լին առաջիկայում հաղթանակ չտանի հյուսիսի նկատմամբ, եզրակացնում է «Մասյաց աղավնին», ապա հարավի մայրաքաղաք Ռիչմոնդը մեծ վտանգի մեջ կհայտնվի:

Ամսագիրը հավաստի է ներկայացնում Պորտ Հադսոնի արյունահեղ մարտը, որին առաջին անգամ՝ ազատություն ստանալուց հետո, մասնակցեց սևամորթների երեք գունդ: Նրանց գրեթե բոլոր սպաների ու զինվորնե-

---

[55] *«Մասյաց աղավնի», 15. VII. 1863, թիվ 13, 221:*
[56] *«Մասյաց աղավնի», 01. XI. 1862, թիվ ԻԱ, 251:*
[57] *«Մասյաց աղավնի», 15. VII. 1863, թիվ 14, 221:*

րի երկու երրորդը սպանվեցին կամ վիրավորվեցին: Սևամորթ զինվորներն աչքի ընկան նաև 1863 թ. հունիսի 6-ին Միլլիկենտ Բենդի կռվում: Շուրջ 250 հազար սևամորթներ անդամագրվեցին հյուսիսի բանակին՝ ձևավորելով 166 գունդ:

1863 թ. հուլիսի 4-ին հարավի զորքերը Վիքսբերգ քաղաքի մոտ, որը «Մասյաց աղավնու» բնութագրմամբ՝ Միսսիսիպի գետի բանալին է և բամբակ արտահանողը, երկար դիմադրությունից հետո անձնատուր եղան հյուսիսի գեներալներից Ու. Գրանտին: Ըստ ամսագրի՝ դա կարող է ծանր հետևանքներ ունենալ Միսսիսիպիի արևելյան կողմի մյուս քաղաքների համար, հաղորդակցությունը կկտրվի Թեքսասի, Արքանզասի, Նոր Օռլեանի և Միսսուրիի հետ[58]*: Ամսագիրն իրավացի է՝ Վիքսբերգի անկումը ռազմավարական խոշոր հաջողություն էր, որը հնարավորություն տվեց վերահսկել երկրի գլխավոր ջրային ուղին՝ Միսսիսիպի գետը և հարավի տարածքը բաժանել միմյանցից կտրված երկու մասի: Հարավը զրկվեց արևմտյան տարածքների մարդկային ու նյութական ռեսուրսներից և շուտով կորցրեց Նոր Օռլեանը: Այնուհետև մի քանի կռիվներում, մեծ կորուստների գնով Ու. Գրանտն արյունաքամ արեց հարավի բանակին՝ սկիզբ դնելով համադաշնության զինված ուժերի վերջնական ջախջախմանը*[59]*:*

«Մասյաց աղավնին» հյուսիսի բանակների հաղթանակներն առանձնապես չի կարևորում և շարունակում է մնալ սկզբունքային այն դիրքում, որ դա եղբայրասպան պատերազմ է: «Ցավալին այն է, – գրում է ամսագիրը, – որ եղբայրն եղբոր դէմ ելած, եղբայր զեղբայրն կսպաննեն»: Այս կռվում «յաղթողը ըստ ինքնեան յաղթութիւնը օտարին վրայ չէ»[60]*: Ամսագիրը տեղեկացնում է, որ, ըստ ստացված հեռագրական լուրերի, Համադաշնության փոխնախագահը խնդրել է Ա. Լինքոլնին իրեն հնարավորություն տալ մեկնել Վաշինգտոն և նրա հետ քննարկել մի շարք կարևոր հարցեր: Ըստ պարբերականի՝ այս լուրը վկայում է, որ հարավցիները մեծ նեղության մեջ են և «կփափագին պատուաւոր պայմաններով վերջ տալ պատերազմին, քանի որ բոլորովին չեն ընկճուած»*[61]*: Իրականում Համադաշնության նախագահ Ջ. Դևիսը 1863 թ. կեսերին փոխնախագահ Ալեքսանդր Ստիֆենսին ուղարկեց Վաշինգտոն, որպեսզի քննարկի գերիների փոխանակության հարցը: Բայց Գետտիսբերգի հաղթանակից հետո Ա. Լինքոլնը հրաժարվեց նրան ընդունել*[62]*:*

Ըստ «Մասյաց աղավնու»՝ ԱՄՆ-ից ստացված մի լուր ապշեցրել է բոլորին: Հարավի նախագահ Ջ. Դևիսը կես միլիոն ստրուկների ազատություն է շնորհել, որպեսզի նրանք իր դրոշի տակ հավաքվեն ու պաշտպանեն իր իշխանությունը: «Այս լուրն անկարելի պետք է համարել», եթե չիմանայինք՝ ինչ աստիճանի նեղության մեջ են հարավցիները և որքան շատ

---

[58] *«Մասյաց աղավնի», 15. VI. 1863, թիվ 12, 188:*

[59] *Տե՛ս* История США. 1983, 441–443; Иванян. 2008, 245; Иванов. 1960, 114; Маль. 2002, 192–196; Куропятник. 2009, 305–306; Бурин. 1988, 67–71, 86–88.

[60] *«Մասյաց աղավնի», 15. VIII. 1863, թիվ 16, 253:*

[61] *«Մասյաց աղավնի», 15. VII. 1863, թիվ 14, 188:*

[62] История дипломатии. 2009, 512.

զինվորի կարիք ունեն: Ով կարող է հավատալ, գրում է ամսագիրը, որ երկու տարի առաջ ապստամբություն սկսվեց «այն վախճանաւ որ գերեվարութիւնը մշտենջենաւոր է Ամերկոյ մէջ, այսօրուան օրս այն կէտին հասած ըլլայ, որ նոյն իսկ գերիներուն դեմ է որ զինքը պաշտպանեն»[63]*:*

«Մասյաց աղավնու» տեղեկությունը հավաստի չէ. հարավի սևամորթները Ջ. Դևիսի հրամանագրով ազատություն չստացան: Փոխնախագահ Ա. Ստիֆենսը հանուն հարավի հաղթանակի առաջարկեց հյուսիսի օրինակով վերացնել ստրկությունը Համադաշնությունում, բայց Ռիչմոնդում կայացած Համադաշնության վեհաժողովը չհամարձակվեց գնալ այդ քայլին[64]*:*

«Մասյաց աղավնուն» հետաքրքրում է այն հարցը, թե ի՞նչ տեղի կունենա հարավում, եթե կես միլիոն «երիտասարդ կտրիճ գերիներին» ազատություն չնորհեն: Այդ դեպքում, հարցնում է ամսագիրը՝ ո՞վ է մնալու հարավի պլանտացիաներում աշխատելու, եթե ոչ ծեր, հիվանդ ստրուկները կամ նրանց երեխաներն ու կանայք: Այս մարդկանցից ի՞նչ օգուտ կա պլանտատորներին: «Տեսէք ուրեմն թէ ինչ հակասութեան մէջ կգտուին այժմ հարավացինք»[65]*, – եզրակացնում է ամսագիրը:*

Վերլուծելով 1863 թ. սկզբներին հարավի Համադաշնությունում ստեղծված վիճակը՝ «Մասյաց աղավնին» փաստում է, որ նախագահ Ջ. Դևիսի իշխանությունը շատ տեղերում նվազել է, քանի որ Վիրջինիայի նահանգի մեկ երրորդից Քենթուքիի, Միսսուրիի, Արքանզասի, Թեննեսիի, Լուիզիանայի և Թեքսաս նահանգների կեսից հարավի զորքերը հալածվել ու դուրս են մղվել հյուսիսի կողմից: Ամսագրի կարծիքով՝ Վիքսբերգի և Պորտ Հադսոնի գրավումով հյուսիսը Միսսիսիպին տիրեց, որից հետո, անշուշտ, պիտի ձգտի գրավել նաև Արքանզասը, Լուիզիանան, Թեքսասն ու Թեննեսին: Թվական տվյալներ բերելով այն մասին, թե Համադաշնությունը Վիրջինիա, Հյուսիսային և Հարավային Քարոլինա, Ալաբամա, Ֆլորիդա ու Ջորջիա նահանգների տարածքի որ մասն է վերահսկում՝ «Մասյաց աղավնին» նշում է՝ հարավցիներն իրենց տրամադրության տակ ունեցած 244 հազար քառ. մղոնից մեկ քառորդը չեն վերահսկում և կորցրել են: Եթե այսպես շարունակվի, եզրակացնում է ամսագիրը, ապա 1864 թ. ապստամբները կարող են վերահսկել իրենց տարածքի միայն մեկ ութերորդը: Վերջին ամիսներին հարավը կորցրել է 97 հազար զինվոր, որից 45 հազարը՝ գեներալ Ռ. Լիի վերջին պարտության ժամանակ: Այժմ հարավն ունի 150 հազար զինվոր Միսսիսիպի արևելյան կողմում և 60 հազար՝ գետի հակառակ ափին: Հյուսիսին այն աստիճան տկարացրել է՝ հարավցիներին, որ «չատ չանցնի վերջապես պիտի ընկճեն և խեղդեն ապստամբութիւնը»[66]*: Ամսագիրը միաժամանակ փաստում է, որ մարդկային և ֆինանսական լուրջ կորուստներ է ունեցել նաև հյուսիսը, ինչը շատ ցավալի է: Բայց ամենից ցավալին այն է, որ ամերիկացիները «մարդախոշոշ պատերազմ են վարում միմյանց դեմ»: Ամփոփելով 1863 թ. քաղաքական տարվա արդյունքները՝*

---

[63] *«Մասյաց աղավնի», 15. IX. 1863, թիվ 18, 283:*

[64] История дипломатии. 2009, 512.

[65] *«Մասյաց աղավնի», 15. IX. 1863, թիվ 18, 284:*

[66] *«Մասյաց աղավնի», 15. VIII. 1863, թիվ 16, 253:*

ամսագիրը հռետորական հարց է տալիս, թե ամերիկացիների հույսը ի՞նչի վրա է, որ երեք տարի շարունակ սարսափելի արյունահեղությամբ իրենց երկիրն ոտնակոխ են անում ու թշվառացնում: Մեզ հայտնի չէ՝ ամերիկացիների հույսը, գրում է ամսագիրը, առավել ևս հայտնի չէ՝ այդ հույսը բարի է, թե՝ ոչ: «Ուստի,– եզրակացնում է պարբերականը, – կթողումք որ իրենք նախ հասկընան իրենց ներկայ և ապագայ վիճակը: Եթէ ըսեն որ «Արասցուք զչար՝ զի եկեսցէ բարի», վախիմ թէ անյոյս կորսուին ու փճանան. – ափսոս այն մեծ ազգին»[67]*:*

1864 թ. հուլիսի 18-ին Ա. Լինքոլնը հայտարարեց, որ պատրաստ է «ԱՄՆ կառավարությունում ընդունել և քննարկել ցանկացած առաջարկություն Դաշնային Միության վերականգման ու ստրկության վերացման պայմանով»[68]*: Նախագահի այս հայտարարությունը մեծապես նպաստեց, որ նրա շուրջը համախմբվեն հարավին ռազմական ճանապարհով հաղթելու և ստրկությունը վերացնելու կողմնակիցները: Դա շատ կարևոր էր նախագահական մոտեցող ընտրությունների շեմին նախընտրական քարոզչություն իրականացնող Ա. Լինքոլնի համար: 1864 թ. հունիսի 7-ին Հանրապետական կուսակցության համագումարը նախագահի թեկնածու առաջադրեց Ա. Լինքոլնին: Նույն թվականի նոյեմբերի 8-ին կայացած նախագահական ընտրություններում Ա. Լինքոլնը հաղթանակ տարավ Դեմոկրատական կուսակցության թեկնածու, իր կողմից պաշտոնանկ արված գեներալ Ջ. Մաք Քլելլանի նկատմամբ*[69]*: Ա. Լինքոլնի հաղթանակին իրազեկ Գ. վրդ. Այվազովսկին այն կարծիքին է, որ նրա նախագահության ժամանակը լրանալու կապակցությամբ ԱՄՆ-ի «գլխաւորները ուզեցին, որպեսզի Ամերիկայի պատերազմը պատուավոր կերպով մը վերջացնեն»*[70]*: Ա. Լինքոլնի հաղթանակը Գ. վրդ. Այվազովսկին համարում է «ահագին առավելութեամբ քվեներով»*[71] *և կարծիք հայտնում, որ նրա նախագահ ընտրվելուց հետո երկրում խաղաղություն չհաստատվեց և «պատերազմը ավելի սաստկութեամբ առաջ տարուեցաւ»*[72]*:*

1865 թ. հունվարից «Մասյաց աղավնին», Գ. վրդ. Այվազովսկու խմբագրությամբ, սկսեց լույս տեսնել «Ծիածան» վերնագրով, որը թեմական, բարոյական, բանասիրական, ուսումնական և քաղաքական տեղեկություններ տպագրող ամսագիր էր: Լույս տեսավ ամսագրի ընդամենը ութ համար, որը, ըստ էության, վերածվեց առաջնորդարանի օրգանի՝ «Թեմական տեղեկություններ» ծավալուն բաժնով: Նոր պարբերականում Գ. վրդ. Այվազովսկին միայն երկու անգամ է անդրադառնում ամերիկյան քաղաքացիական պատերազմին: Առաջին հրապարակման մեջ նա, շարունակելով «Մասյաց աղավնու» ուղեգիծը, հույս է հայտնում, որ «Ամերիկայի եղբայրասպան պատերազմը պիտի դադրի ու հաշտութիւն պիտի լինի երկու կողմէն

---

[67] *«Մասյաց աղավնի», 01. I. 1864, թիվ 1, 19:*

[68] История США. 1983, 444.

[69] *Տե՛ս* История США. 1983, 445; Иванов. 1960, 163; Иванян. 2008, 247; Бурин. 1988, 95.

[70] *«Ծիածան» (Թեոդոսիա), 1865, ապրիլ, թիվ 4, 94:*

[71] *«Ծիածան», 1865, հունիս, թիվ 6, 138:*

[72] *«Ծիածան», 1865, ապրիլ, թիվ 4, 94:*

չափաւոր պայմաններով», բայց շուտով այդ հույսը կորաւ և «պատերազմը առաջ գնաց կատաղաբար»[73]: 1865 թ. ապրիլին «Ծիածանը» գրում է. «Օրերս խաղաղութեան և հաշտութեան ցանկալի նշոյլը սկսեր է երևնալ: Կռիվ սկսիլը շատ դիւրին է, հաշտութիւնը շատ դժուար»[74]:

Ամսագրի տեղեկություններով՝ 1865 թ. ապրիլի 3-ին գեներալ Ու. Գրանտը գրավել է Համադաշնության մայրաքաղաք Ռիչմոնդը, իսկ հարավի բանակի գլխավոր հրամանատար Ռ. Լին անձնատուր է եղել: Դրանից հինգ օր չանցած՝ «Միացյալ Նահանգաց մեծ հասարակապետութեան գահերէցն Աբրահամ Լինքոլն չարաչար մահուամբ սպանուեց» և բոլոր ամերիկացիները՝ անգամ նրա թշնամիները, մեծ տրտմութեան մեջ ընկան[75]: Հավաստի ներկայացնելով հարավի անձնատուր լինելը և թատրոնում դերասան Ջոն Բուտսի կողմից Ա. Լինքոլնի սպանությունը[76], ամսագիրը քաղաքացիական պատերազմի ավարտին չի անդրադառնում:

«Ծիածանն» Ա. Լինքոլնի մահը համարում է 1865 թ. «նշանավոր դեպքերից մեկը»: Ըստ ամսագրի՝ ամեն մարդ հույսով սպասում էր, որ ամերիկյան քաղաքացիական պատերազմը կավարտվի և «բյուրավոր անմեղ արյունների հոսքը դադարի»: Բայց տեղի ունեցավ անսպասելին. նախագահ Ա. Լինքոլնը դավադրաբար սպանվեց, «ուստի պատերազմը դադարելու տեղը ևս առաւել սաստկացաւ»[77]: Ամսագիրը հարկ չի համարում անդրադառնալ Ա. Լինքոլնի սպանության «ցաւալի դեպքի մանր պարագաներին», որոնք «այնքան խրատ առնելու բաներ չեն, որքան նոյն Գահերեցուն վարքն ու կենսագրութիւնը»: Այս անգամ ավելի մանրամասն ներկայացնելով նախագահ Ա. Լինքոլնի անցած ուղին՝ «Ծիածանը» կարևորում է այն իրողությունը՝ հասարակ ծագումով մարդը, ով երկրագործի որդի էր, փայտահատ, հյուսն ու բեռնակիր, «եղավ աշխարհիս մեծամեծ ազգերէն մեկուն գլուխը»:

«Ծիածանի» խմբագիրն ԱՄՆ-ում խաղաղություն և բարեկեցություն հաստատելու հարցում հույսեր է կապում Ա. Լինքոլնին երկրի նախագահի պաշտոնում փոխարինած Էնդրյու Ջոնսոնի հետ: Նրա կարծիքով՝ «այդ անանձն և աղքատ ծնողաց որդին», մանուկ հասակից առանց ուսման մեծացած, ինքնուրույն գրել-կարդալ սովորած դերձակի աշակերտը, ով հետագայում դարձավ Ա. Լինքոլնի օգնականը, «ամէն կողմանէ ամերիկացիների մեծարանքին արժանավոր մարդ է»: Գ. վրդ. Այվազովսկին հույս ուներ, որ Է. Ջոնսոնը «իրեն փորձառու, ուշադիր և ողջամիտ բնաւորութեան շնորհիվ ոչ միայն կդառնա Ա. Լինքոլնի արժանի իրավահաջորդը, «այլև Ամերիկայի գործաց յաջողութեան և խաղաղութեան պատճառը պիտի լինի»[78]:

---

[73] *«Ծիածան», 1865, ապրիլ, թիվ 4, 94:*

[74] *«Ծիածան», 1865, ապրիլ, թիվ 4, 94:*

[75] *«Ծիածան», 1865, հունիս, թիվ 6, 138:*

[76] *Տե՛ս* Куропятник. 2009, 314; Иванов. 1960, 166; История США 1983, 456; Бурин. 1988, 110–112; Иванов. 1984, 274.

[77] *«Ծիածան», 1865, հունիս, թիվ 6, 138:*

[78] *«Ծիածան», 1865, հունիս, թիվ 6, 139:*

Եզրակացություն

Չորս տարի շարունակ ամերիկյան քաղաքացիական պատերազմի ընթացքին ուշադրությամբ հետևող «Մասյաց աղավնի» ամսագիրը և նրա ուղեգիծը հետևողականորեն շարունակող «Ծիածանն» ԱՄՆ-ում տեղի իրադարձություններն իրավացիորեն գնահատում էին որպես ազգային երկպառակություն, ազգասպան, եղբայրասպան ու քաղաքացիական պատերազմ: Ազգային միասնության, համերաշխության ու համախմբման կողմնակից «Մասյաց աղավնին» գրեթե բոլոր հրապարակումներում հանդես է գալիս պատերազմը դադարեցնելու և հաշտություն կնքելու օգտին: Պատերազմը հիմնականում անկողմնակալ դիրքերից լուսաբանած պարբերականը դեմ էր ստրկությանը և կարևորում էր հյուսիսի հաղթանակը: Ամսագիրը համոզված էր, որ հյուսիսի և հարավի աննպատակ ու անիմաստ հակամարտության վերացմամբ է միայն հնարավոր հաղթահարել ազգային պառակտվածությունը և կրկին համախմբվել ԱՄՆ ուժեղ ու մեծ հանրապետության ներքո:

Ֆելիքս Մովսիսյան – պ. գ. դ., պրոֆ., Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի պատմության ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ XVIII–XIX դդ. ամերիկյան, եվրոպական հեղափոխություններ, ազգային-ազատագրական շարժումներ և դրանց վերաբերյալ հայ հասարակական մտքի ու պարբերական մամուլի գնահատական, արևմտահայ հասարակական կազմակերպություններ, մասոնության պատմություն: Հեղինակ է 4 մենագրության և 90-ից ավելի հոդվածի: felmov@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

«Արշալույս արարատյան» (Զմյուռնիա), 04. V. 1863:

Զարդարեան Կ. 1911, Յիշատակարան, հ. 2, Կ. Պոլիս, Օսմանեան գործակցական ընկերութեան տպարան, 196 էջ:

«Ծիածան» (Թեոդոսիա), 1865, ապրիլ, թիվ 4, հունիս, թիվ 6:

Կարինյան Ա. 1960, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 2, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 635 էջ:

Հայ պարբերական մամուլի պատմություն. XVIII–XIX դարեր, 2006, խմբ. կոլ. Ա. Ա. Խառատյան և ուրիշներ, հ. 1, Գահիրե, 704 էջ:

Հովհաննիսյան Ա. Գ. 1974, Արևելահայ հասարակական հոսանքները: Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 432 էջ:

«Մասյաց աղավնի» (Թեոդոսիա), 15. I. 1861, թիվ Բ, 01. II. 1861, թիվ Գ, 01. III. 1861, թիվ Ե, 01. IV. 1861, թիվ է, 15. VI. 1861, թիվ ԺԲ, 01. VIII. 1861, թիվ ԺԵ, 01. IX. 1861, թիվ ԺԷ, 01. X. 1861, թիվ ԺԹ, 01. XII. 1861, թիվ ԻԳ, 15. I. 1862, թիվ Բ, 01. II. 1862, թիվ Գ, 15. IV. 1862, թիվ Ը, 01. XI. 1862, թիվ ԻԱ, 15. XI. 1862, թիվ ԻԲ, 01. IV. 1863, թիվ 7, 15. VI. 1863, թիվ 12, 15. VII. 1863, թիվ 13, 15. VII. 1863, թիվ 14, 15. VIII. 1863, թիվ 16, 15. VIII. 1863, թիվ 16, 15. IX. 1863, թիվ 18, 01. I. 1864, թիվ 1:

Մովսիսյան Ֆ. 2020, № 3, «Մասյաց աղավնի» ամսագիրը Իտալիայի միավորման մասին (1860– 1865). – ՊԲՀ, էջ 75–98:

Մովսիսյան Ֆ. 2020, № 2, Ռուսահայ պարբերական մամուլը XIX դարի իտալական ազգային-ազատագրական պայքարի մասին.– «Պատմություն և մշակույթ» (Երևան), էջ 50–65:

Մովսիսյան Ֆ. 2021, № 1, պր. Ա, «Մասյաց աղավնի» պարբերականը Իտալիայի միավորման համար պայքարում Վիկտոր Էմմանուիլ II-ի դերի մասին. – ՎՊՀ «Տեղեկագիր», Երևան, էջ 91–117:

Մովսիսյան Ֆ. 2021, № 1, «Մասյաց աղավնի» պարբերականը Զուզեպպե Գարիբալդու ազատագրական պայքարի մասին. – «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու» (Երևան), էջ 40–58:

Ներսիսյան Մ. Գ. 1961, Քաղաքացիական պատերազմը Ամերիկայում հայ պարբերական մամուլի լուսաբանմամբ. – ՊԲՀ, № 2, էջ 47–66:

Ներսիսյան Մ. Գ. 1982, Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 406 էջ:

Սենդբերգ Կ. 1988, Լինկոլն, Երևան, «Հայաստան», 720 էջ:

Бурин С. Н. 1988, На полях сражений гражданской войны в США. М., «Наука», 176 с.

Ефимов А.Е. 2009, Гражданская война в Северной Америке (1861–1865). – В сб.: История дипломатии. Сост. А. Лактионов. М., «АСТ МОСКВА», 944 с.

Иванов Р. Ф. 1960, Гражданская война в США. М., Академия наук СССР, 176 с.

Иванов Р. Ф. 1984, Дипломатия Авраама Линкольна. М., «Международные отношения», 304 с.

Иванов Р. Ф. 2002, Конфедеративные штаты Америки. 1861–1865, т. 1. М., Ин-т воен. истории РАН, 275 с.

Иванян Э. А. 2008, История США. М., «Дрофа», 576 с.

История дипломатии. 2009, Сост. А. Лактионов. М., «АСТ», 944 с.

История США. 1983, т. 1, 1607–1877. Отв. ред. Н. Н. Болховитников. М., «Наука», 687 с.

Куропятник Г. П. 2009, Гражданская война в США. М., «Наука», 354 с.

Маль К. 2002, Гражданская война в США 1861–1865. Минск, «Харвест», 592 с.

Родс Джеймс Форд. 2017, История гражданской войны в США. 1861–1865. Пер. с англ. М., «КоЛибри», 431 с.

Фостер У. З. 1953, Очерки политической истории Америки. М., «Издательство иностранной литературы», 918 с.

Фостер У. З. 1955, Негритянский народ в истории Америки. Пер. с англ. М., «Издательство Иностранной литературы», 806 с.

Barney W. 1975, Flawed Victory. A New Perspective on the Civil War. New York, Praeger Publishers, 215 p.

Borit G. 1992, War Opponent and War President. New York. Oxford, 458 p.

Dengerfield G. 1952, The Era of good feelings. New York, 511 p.

Douglas Fr. 1945, Selections from his Writings Ed. By Ph. Foner, N Y. 95 p.

Foner E. 1980, Poliics and Ideology in the Age of the Civil War. New York, Oxford University Press, 250 p.

John S. D. 1999, Eisenhower. Agent of Destiny: The Life and Times of General Winfield Scott and the Profession of Arms. Kent, 496 p.

Long D. E. 1997, The Jewel of Liberty; Abraham Lincoln's Re-Election and the End of Slavery. New York., Da Capo Press, 400 p.

Milton G. 1941, Conflict. The American Civil War. New York, Coward-McCann, 433 p.

Paludan P. S. 1988, "A. Peoples Contest", The Union and Civil War New York, Harper & Row, 486 p.

Quinn C. A. 1991, Lincoln's Springfied on the Civil War. Macomb. III, Western Illinois University edition, 136 p.

Sears S. W. 1988. George B. McClellan: The Young Napoleon. New York, Generic, 482 p.

Timothy D. Johnson. 1998, Winfield Scott: A Quest for Military Glory, Lawrence. University Press of Kansas, 328 p.

Vartan Malcom M. 1919, The Armenians in America. Boston, Chicago, Pilgrim Press, 142 p.

«МАСЬЯЦ АГАВНИ» ОБ АМЕРИКАНСКОЙ ГРАЖДАНСКОЙ ВОЙНЕ

ФЕЛИКС МОВСИСЯН

Р е з ю м е

Ключевые слова: «Масьяц агавни», Север, Юг, власть, рабство, война, междоусобица, восстание, единство, согласие, Авраам Линкольн.

Американская гражданская война 1861–1865 гг. нашла широкое отражение в армянской периодической печати того времени, в том числе в журнале «Масьяц агавни». Это периодическое издание, представлявшее армянское национально-консервативное течение, выходило в свет в 1860–1865 гг. в Феодосии под редакцией Габриэла архимандрита Айвазовского.

«Масьяц агавни» был одним из тех немногих армянских изданий, которые еще до начала гражданской войны в США предвидели неизбежность противостояния между северными и южными штатами. Журнал связывал это с избранием на пост президента члена республиканской партии Авраама Линкольна, представляющего интересы северных штатов. Избрание А. Линкольна журнал считал одним из самых значительных событий своего времени. Согласно изданию «Масьяц агавни», основной причиной разжигания войны стал вопрос рабства и работорговли, против чего выступал Север, а Юг не хотел отказываться от «выгодной … отвратительной и жестокой традиции» эксплуатирования рабского труда.

По мнению журнала, «беспощадный враг» рабства А. Линкольн в период своего правления должен искоренить рабство, по этой причине произошел раскол между Севером и Югом, что привело к вражде и началу братоубийственной войны. «Масьяц агавни» считал события, происходящие в Соединенных Штатах, этнической междоусобной, брато-

убийственной, уничтожающей нацию гражданской войной. Журнал был приверженцем идеи национального единства, согласия и сплоченности, поэтому в своих многочисленных публикациях всегда выступал как сторонник прекращения войны и заключения перемирия. По убеждению редактора издания, только с устранением бесцельного и бессмысленного противоборства между Севером и Югом возможно преодолеть национальную раздробленность и снова сплотиться под сильной и могущественной государственной властью Соединенных Штатов Америки.

Феликс Мовсисян – д. и. н., проф., заведующий кафедрой истории Ванадзорского государственного университета им. Ов. Туманяна. Научные интересы: американские и европейские революции XVIII–XIX веков, национально-освободительные движения и их оценка в армянской общественной мысли и периодической печати, западноармянские общественные организации, история масонства. Автор 4 монографий и более 90 статей. felmov@mail.ru

"MASYATS AGHAVNI" ON THE AMERICAN CIVIL WAR

FELIX MOVSISYAN

S u m m a r y

Key words: "Masyats Aghavni", North, South, power, slavery, war, strife, rebellion, unity, solidarity, Abraham Lincoln.

The American Civil War of 1861–1865 received a wide response in the Armenian periodical press of the time, including the "Masyats Aghavni" magazine.This periodical, which was representing the Armenian national-conservative current, was published in 1860–1865 in Theodosia edited by Archimandrite Gabriel Aivazovsky.

"Masyats Aghavni" is one of the unique Armenian periodicals that predicted the inevitability of the conflict between the northern and southern states before the start of the US Civil War. The magazine attributes this to the election of Abraham Lincoln, the representative of the Republican Party representing the interests of the northern states, which is considered one of the remarkable events of the time. According to the "Masyats Aghavni", the main reason for the outbreak of the civil war is the issue of slavery and slave trade, which the North opposes, and the South does not want to give up the "profitable … disgusting and ruthless habit" of exploiting the slave labor.

According to the magazine, a "fierce enemy of slavery" A. Lincoln during his presidency has to abolish the slavery that is why the North and the South have split, become enemies and started the enmity, the fratricidal war. The

"Masyats Aghavni" considers the events in the United States a ethnic strife, fratricide, genocide and civil war. The magazine advocated the idea of national unity, solidarity, and consolidation, therefore, in its numerous publications it always supported the idea of ending the war and making peace. According to the editor of the periodical, only by eliminating the aimless and meaningless conflict between the North and the South it is possible to overcome the national division and be reunited under a strong and mighty power of the United States of America.

Felix Movsisyan – Doctor of Philosophy in History, Professor, Head of the Chair of History of Vanadzor State University after Hovh. Tumanyan. Scientific interests: American and European revolutions of the XVII–XIX centuries, national-liberation movements and their estimation in the Armenian press media, Western-Armenian public organizations, history of Masonry. Author of 4 monographs and over 90 articles. felmov@mail.ru